

Կ Ա Ր Գ

ԿՈԼԵԿՏԻՎ ՆՇԱՆԸ ԿԱՄ ԴՐԱ ՀԱՅՏԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԱՆՁԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԱՄ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՀԱՅՏԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ ՓՈԽԱԿԵՐՊԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է կոլեկտիվ նշանը կամ դրա հայտը համապատասխանաբար անձի ապրանքային նշանի կամ ապրանքային նշանի հայտի փոխակերպելու և հակառակը՝ անձի ապրանքային նշանը կամ ապրանքային նշանի հայտը կոլեկտիվ նշանի կամ դրա հայտի փոխակերպելու (այսուհետ՝ փոխակերպում) կարգը:

2. Կոլեկտիվ նշանը որևէ անձի ապրանքային նշանի փոխակերպվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն N 1 ձևի:

3. Դիմումը, որը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն (այսուհետ՝ գործակալություն) և, որին կցվում է փոխակերպվող կոլեկտիվ նշանի վկայագիրը, լրացվում է հետևյալ կարգով՝

1) 2.1-6-րդ կետերը լրացվում են ըստ դրանցում նշված ցուցումների: Ընդ որում, 5-րդ դաշտը լրացվում է այն դեպքում, երբ նոր իրավատերը ներկայացված է ներկայացուցչի միջոցով.

2) 7-րդ և 8-րդ կետերը լրացվում են այն դեպքում, երբ փոխակերպումն իրականացվում է այն ապրանքների և (կամ) ծառայությունների սահմանափակմամբ, որոնց համար գրանցված է կոլեկտիվ նշանը: Այս դեպքում՝

ա. 7-րդ կետում նշվում են միայն կոլեկտիվ նշանի վկայագրում ներկայացված այն ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար նախատեսվում է պահպանել ապրանքային նշանի գրանցման գործողությունը: Նշված ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (ԱԾՄԴ) դասերին համապատասխան խմբավորված.

բ. 8-րդ կետում նշվում են միայն կոլեկտիվ նշանի վկայագրում ներկայացված այն ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար չի նախատեսվում պահպանել ապրանքային նշանի գրանցման գործողությունը: Այդ ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ԱԾՄԴ-ի դասերին համապատասխան խմբավորված:

3) 10-րդ կետը լրացվում է՝ համապատասխան վանդակները նշելու միջոցով՝ հաշվի առնելով, որ փոխակերպման հիմք կարող է հանդիսանալ կոլեկտիվ նշանի իրավատիրոջ և այն անձի միջև կնքված պայմանագիրը կամ փոխանցման ակտը, որի ապրանքային նշանին է փոխակերպվում կոլեկտիվ նշանը, կամ կոլեկտիվ նշանի իրավատիրոջ որոշումը, կամ օրենքին չհակասող այլ փաստաթուղթ: Փոխակերպման հիմք հանդիսացող փաստաթղթերը կամ նոտարական կարգով վավերացված դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքները պետք է կցվեն դիմումին:

4) 10-րդ կետում՝

ա. 10.1-ին և 10.2-րդ կետերը լրացվում և ստորագրվում են կոլեկտիվ նշանի իրավատիրոջ և ապրանքային նշանի նոր իրավատիրոջ կողմից: Նշված անձանց փոխարեն կարող են ստորագրել նաև նրանց ներկայացուցիչները: Ստորագրողների ինքնությունից կախված՝ նշվում են 10.4-րդ կետի համապատասխան վանդակները:

բ. 10.3-րդ կետում նշվում է դիմումի ստորագրման թվականը՝ օրը, ամիսը, տարեթիվը:

5) 11-րդ կետը լրացվում է վանդակը նշելու, վճարված պետական տուրքի գումարի չափը լրացնելու և վճարման եղանակին համապատասխանող վանդակը նշելու միջոցով: Տվյալ դեպքում պետական տուրքը վճարվում է ապրանքային նշանների պետական գրանցամատյանում փոփոխություն կատարելու համար: Վկայագրի կրկնակ խնդրարկելու դեպքում վճարվում է նաև դրա համար սահմանված պետական տուրքը: Այս դեպքում դիմումի 11-րդ կետի համաձայն վճարված պետական տուրքի գումարի չափը նշվում է երկու գումարելիների տեսքով, եթե դրանք վճարված են առանձին-առանձին:

6) 12-րդ կետը լրացվում է վանդակը և դիմումին կից ներկայացված լրացուցիչ թերթերի թիվը նշելու միջոցով, որոնք պայմանավորված են դիմումի 2.2-րդ, 4.3-րդ, 7-րդ, 8-րդ և 10.4-րդ կետերին համապատասխան տվյալները ներկայացնելով:

7) 13-րդ կետի համապատասխան դաշտը լրացվում է՝ հաշվի առնելով «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 49-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ապրանքային նշանի գրանցման վկայագրի կրկնակ տրամադրելու վերաբերյալ պահանջները:

4. Որևէ անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպվում է ներկայացված դիմումի հիման վրա՝ համաձայն N 2 ձևի, որին կից պետք է ներկայացվի նաև օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան ձևակերպված կոլեկտիվ նշանի օգտագործման կանոնակարգը:

5. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահանջները N 2 ձևի համաձայն ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են համապատասխան փոփոխություններով, այսինքն՝ «կոլեկտիվ նշան» բառակապակցությունը և դրան համապատասխան հոլովաձևերը փոխարինելով «ապրանքային նշան» բառակապակցությամբ և դրան համապատասխան հոլովաձևերով և՛ հակառակը:

6. Գործակալությունը սույն կարգի 2-րդ կամ 4-րդ կետում նշված դիմումները քննարկում է դրանց ստացման օրվանից 10-օրյա ժամկետում՝ ստուգելով դրանց համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին:

7. Որևէ անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու մասին դիմումի քննարկման ընթացքում հաշվի են առնվում նաև կոլեկտիվ նշանի գրանցումը մերժելու մասին օրենքի 34-րդ հոդվածով սահմանված հիմքերի առկայությունը:

8. Եթե պարզում է, որ ներկայացված դիմումը համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին, իսկ համապատասխան դեպքում՝ որևէ անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու մասին դիմումի քննարկման

արդյունքում պարզվել է նաև, որ առկա չէ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված կոլեկտիվ նշանի գրանցման մերժման որևէ հիմք, ապա գործակալությունը կատարում է համապատասխան փոխակերպումը՝ դրա մասին գրառում կատարելով ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և փոխակերպված կոլեկտիվ նշանի կամ համապատասխան դեպքում՝ ապրանքային նշանի վկայագրում (այսուհետ՝ վկայագիր):

9. Դիմումին կից վկայագիրը չներկայացնելու և դրա կրկնակը խնդրարկելու դեպքում՝ նշված 10-օրյա ժամկետում գործակալությունը պատրաստում է վկայագրի կրկնակը՝ փոխակերպան մասին համապատասխան գրառում կատարելով դրա մեջ:

10. Գործակալությունը սույն կարգի 8-րդ կետի համաձայն ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և փոխակերպված կոլեկտիվ նշանի վկայագրում կատարում է հետևյալ գրառումներից մեկը՝

1) «Կոլեկտիվ նշանը փոխակերպվել է (նշվում են նոր իրավատիրոջ լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը և գտնվելու վայրը (հասցեն) ապրանքային նշանի»՝ նշելով փոխակերպման թվականը (պետական գրանցամատյանում դրա մասին գրառում կատարելու օրը, ամիսը, տարեթիվը).

2) «Ապրանքային նշանը փոխակերպվել է (նշվում են նոր իրավատիրոջ լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը և գտնվելու վայրը (հասցեն) կոլեկտիվ նշանի»՝ նշելով փոխակերպման թվականը:

11. Փոխակերման ժամանակ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը կրճատելու դեպքում գործակալությունն ապրանքային նշանների պետական գրանցամատյանում և վկայագրում կատարում է գրառում նաև դրա մասին՝ նշելով այն ապրանքների (կամ) ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ կշարունակի գործել փոխակերպված գրանցումը:

12. Գործակալությունը վկայագիրը կամ համապատասխան դեպքում՝ վկայագրի կրկնակը նոր իրավատիրոջն է հանձնում պատվիրված փոստային առաքմամբ՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ առձեռն՝ ստացականով:

13. Եթե դիմումի քննարկման ընթացքում պարզվում է, որ այն չի համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա գործակալությունը հարցում է ուղարկում դիմումատուին՝ հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում դիմումը և (կամ) դրան կից ներկայացված նյութերը ճշգրտելու և (կամ) բացակայող փաստաթղթերը ներկայացնելու առաջարկությամբ:

14. Պահանջված նյութերը երկամսյա ժամկետում ստանալու դեպքում գործակալությունը կատարում է դիմումում նշված փոխակերպումը՝ առաջնորդվելով սույն կարգի 7-11-րդ կետերով:

15. Պահանջված նյութերը դիմումատուի կողմից երկամսյա ժամկետում չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է հետ կանչված, ինչի մասին գործակալությունը 10-օրյա ժամկետում գրավոր ծանուցում է դիմումատուին: Այս դեպքում դիմումի 9-րդ կետում նշված պայմանագիրը կամ փոխանցման ակտը և վճարված պետական տուրքերի անդորրագրերը վերադարձվում են դիմումատուին առձեռն՝ ստացականով, կամ պատվիրված փոստային առաքմամբ:

16. Եթե անձի ապրանքային նշանը կոլեկտիվ նշանի փոխակերպելու մասին դիմումի քննարկման արդյունքում պարզվում է, որ այն համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին, սակայն առկա են օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված կոլեկտիվ նշանի գրանման մերժման հիմքեր, ապա գործակալությունը մերժում է ներկայացված դիմումը, ինչի մասին 10-օրյա ժամկետում ծանուցում է դիմումատուին:

17. Կոլեկտիվ նշանի հայտը որևէ անձի ապրանքային նշանի հայտի փոխակերպվում է N 3 ձևի համաձայն ներկայացված դիմումի, իսկ որևէ անձի ապրանքային նշանի

հայտը կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպվում է N 4 ձևի համաձայն ներկայացված դիմումի հիման վրա: Նշված դիմումները գործակալություն են ներկայացվում մինչև հայտարկված կոլեկտիվ նշանի (ապրանքային նշանի) գրանցման մասին որոշման ընդունումը:

18. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված պահանջները (բացառությամբ 7-րդ ենթակետի) NN 3 և 4 ձևերի համաձայն ներկայացված դիմումների նկատմամբ կիրառվում են մութաթիս մութանդիս (mutatis mutandis - համապատասխան փոփոխություններով): Տվյալ դեպքում պետական տուրքը վճարվում է ապրանքային նշանի հայտում փոփոխություն կատարելու համար:

19. Գործակալությունը սույն կարգի 17-րդ կետում նշված դիմումները քննարկում է դրանց ստացման օրվանից 10-օրյա ժամկետում՝ ստուգելով դրանց համապատասխանությունը սույն կարգով սահմանված պահանջներին:

20. Եթե քննարկման արդյունքում պարզվում է, որ ներկայացված դիմումը համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին, ապա գործակալությունը կատարում է համապատասխան փոխակերպումը՝ դրա մասին համապատասխան փոփոխություններ կատարելով ապրանքային նշանների հայտերի հիմնապաշարում, ինչի մասին 10-օրյա ժամկետում գրավոր ծանուցում է հայտատուին:

21. Փոխակերպման ժամանակ ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը սահմանափակելու դեպքում գործակալությունն ապրանքային նշանների հիմնապաշարում կատարում է գրառում նաև դրա մասին՝ նշելով այն ապրանքների (կամ) ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ կշարունակվի հայտի հետագա քննարկումը:

22. Եթե դիմումի քննարկման ընթացքում պարզվում է, որ այն չի համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին, ապա գործակալությունը հարցում է ուղարկում դիմումատուին՝ հարցումն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում դիմումը

(և) կամ դրան կից ներկայացված նյութերը ճշգրտելու և (կամ) բացակայող փաստաթղթերը ներկայացնելու առաջարկությամբ:

23. Պահանջված նյութերը երկամսյա ժամկետում ստանալու դեպքում գործակալությունը կատարում է դիմումում նշված փոխակերպումը՝ առաջնորդվելով սույն կարգի 20-21-րդ կետերով:

24. Պահանջված նյութերը դիմումատուի կողմից երկամսյա ժամկետում չներկայացվելու դեպքում դիմումը համարվում է հետ կանչված, ինչի մասին գործակալությունը 10-օրյա ժամկետում գրավոր ծանուցում է դիմումատուին: Այս դեպքում դիմումատուին են վերադարձվում դիմումի 9-րդ կետում նշված պայմանագիրը կամ փոխանցման ակտը և վճարված պետական տուրքի անդորրագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

<p style="text-align: center;">Դ Ի Մ ՈՒ Մ</p> <p>կոլեկտիվ նշանն անձի ապրանքային նշանի փոխակերպելու մասին</p>	<p>Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն</p> <p>Գլխավոր պողոտա, Կառավարական տուն, 3, 0010 Երևան</p>				
<p>1. Խնդրարկվում է ստորև նշված կոլեկտիվ նշանը փոխակերպել սույն դիմումում նշված անձի ապրանքային նշանի</p>	<p>(լրացնում է գործակալությունը)</p>				
<p>2. Սույն դիմումը վերաբերում է կոլեկտիվ նշանի հետևյալ գրանցմանը (վկայագիրը կցվում է)</p>					
<p>2.1. գրանցման համարը և թվականը</p> <p>2.2. ապրանքները և (կամ) ծառայությունները, որոնց համար գրանցված է կոլեկտիվ նշանը</p> <p>ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի <input type="checkbox"/> շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>					
<p>3. Կոլեկտիվ նշանի իրավատերը (իրավատերերը)</p>					
<p>3.1. նշվում են իրավաբանական անձի լրիվ անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը</p>					
<p>3.2. իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն)</p> <table border="0" style="width: 100%;"> <tr> <td style="width: 50%;">նշվում են իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն) հասցեն</td> <td style="width: 15%;">հեռախոսահամարը</td> <td style="width: 15%;">ֆաքսը</td> <td style="width: 10%;">էլ. փոստի</td> </tr> </table>		նշվում են իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն) հասցեն	հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի
նշվում են իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն) հասցեն	հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի		
<p>4. Անձը, որի ապրանքային նշանի է փոխակերպվում կոլեկտիվ նշանը (նոր իրավատեր)</p>					
<p>4.1. նշվում են նոր իրավատիրոջ լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը, հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>					
<p>4.2. նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն)</p> <table border="0" style="width: 100%;"> <tr> <td style="width: 50%;">նշվում են նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն)</td> <td style="width: 15%;">հեռախոսահամարը</td> <td style="width: 15%;">ֆաքսը</td> <td style="width: 10%;">էլ. փոստի հասցեն</td> </tr> </table>		նշվում են նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն)	հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի հասցեն
նշվում են նոր իրավատիրոջ գտնվելու վայրը (հասցեն)	հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի հասցեն		
<p>4.3. <input type="checkbox"/> նոր իրավատերերը մի քանիսն են (նոր իրավատերերի և նրանց ներկայացուցիչների մասին տվյալներն ըստ 4-4.2-րդ և 5-րդ կետերի տրվում են լրացուցիչ թերթի վրա)</p>					
<p>5. Նոր իրավատիրոջ ներկայացուցիչը</p>					
<p>5.1. նշվում են ներկայացուցչի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը ֆաքսը էլ. փոստի հասցեն</p>					
<p>6. Նամակագրության հասցեն՝</p> <table border="0" style="width: 100%;"> <tr> <td style="width: 50%;">նշվում են փոստային հասցեն, հասցեն</td> <td style="width: 15%;">հեռախոսահամարը</td> <td style="width: 15%;">ֆաքսը</td> <td style="width: 10%;">էլ. փոստի</td> </tr> </table>		նշվում են փոստային հասցեն, հասցեն	հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի
նշվում են փոստային հասցեն, հասցեն	հեռախոսահամարը	ֆաքսը	էլ. փոստի		
<p>7. <input type="checkbox"/> Փոխակերպված ապրանքային նշանի գրանցման գործողությունը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար</p>					
<p>ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի <input type="checkbox"/> շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա</p>					

8. Ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են

ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի վրա

շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի

9. Կոլեկտիվ նշանի փոխակերպումն իրականացվում է՝

պայմանագրի փոխանցման ակտի այլ փաստաթղթի հիման վրա

(պայմանագիրը, փոխանցման ակտը, այլ փաստաթուղթը կամ դրա քաղվածքը կցվում են)

10. Ստորագրությունը _____

10.1. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. Թվականը _____ 201_ թ.

10.4. Ստորագրողը՝ կոլեկտիվ նշանի իրավատերն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

նոր իրավատերն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

կոլեկտիվ նշանի նոր իրավատերերն են նրանց ներկայացուցիչներն են

նոր իրավատերերը մի քանիսն են (10.1-ին կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ դրամ պետական տուրք՝

բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր:

13. Կոլեկտիվ նշանի գրանցման վկայագիրը՝ կցվում է չի կցվում, խնդրարկվում է դրա

կրկնակը (սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը կցվում է)

5.1. նշվում են ներկայացուցչի լրիվ անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը	Ֆաքսը	էլ. փոստի հասցեն
6. Նամակագրության հասցեն՝		
նշվում են փոստային հասցեն,	հեռախոսահամարը	Ֆաքսը էլ. փոստի հասցեն
7. <input type="checkbox"/> Կոլեկտիվ նշանի գրանցման գործողությունը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար		
ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի <input type="checkbox"/> շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա		
8. Ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են		
ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի <input type="checkbox"/> շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա		
9. Ապրանքային նշանի փոխակերպումն իրականացվում է՝ <input type="checkbox"/> պայմանագրի, <input type="checkbox"/> փոխանցման ակտի, <input type="checkbox"/> այլ փաստաթղթի հիման վրա <input type="checkbox"/> պայմանագիրը, <input type="checkbox"/> փոխանցման ակտը, <input type="checkbox"/> այլ փաստաթուղթը կամ <input type="checkbox"/> դրա քաղվածքը կցվում են)		
10. Ստորագրություն՝		
10.1. _____ (ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)		
10.2. _____ (ստորագրությունը) (անունը, ազգանունը, պաշտոնը)		
10.3. Թվականը _____ 201_ թ.		
10.4. Ստորագրողը՝		
<input type="checkbox"/> ապրանքային նշանի իրավատերն է <input type="checkbox"/> նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)		
<input type="checkbox"/> նոր իրավատերն է <input type="checkbox"/> նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)		
<input type="checkbox"/> ապրանքային նշանի և կոլեկտիվ նշանի իրավատերերն են <input type="checkbox"/> նրանց ներկայացուցիչներն են		
<input type="checkbox"/> ապրանքային նշանի իրավատերերը մի քանիսն են (11.2-րդ կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)		
11. <input type="checkbox"/> Վճարված է _____ դրամ պետական տուրք՝		
<input type="checkbox"/> բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) <input type="checkbox"/> էլեկտրոնային եղանակով		
12. <input type="checkbox"/> Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր		
13. Ապրանքային նշանի գրանցման վկայագիրը՝ <input type="checkbox"/> կցվում է <input type="checkbox"/> չի կցվում, խնդրարկվում է դրա կրկնակը (սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը կցվում է)		
14. <input type="checkbox"/> Սույն դիմումին կից ներկայացվում է կոլեկտիվ նշանի օգտագործման կանոնակարգը		

նշվում են փոստային հասցեն,
հասցեն

հեռախոսահամարը

ֆաքսը

էլ. փոստի

7. Փոխակերպված հայտը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար

ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի

շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա

8. Կոլեկտիվ նշանի հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են

ցանկից հանված ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի

շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա

9. Կոլեկտիվ նշանի հայտի փոխակերպումն իրականացվում է՝

պայմանագրի, փոխանցման ակտի, այլ փաստաթղթի հիման վրա

(պայմանագիրը, փոխանցման ակտը, այլ փաստաթուղթը կամ դրա քաղվածքը կցվում են)

10. Ստորագրությունը _____

10.1. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. Թվականը _____ 201_ թ.

10.4. Ստորագրողը՝ կոլեկտիվ նշանի հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

նոր հայտատուն է

նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

կոլեկտիվ նշանի նոր հայտատուներն են

նրանց ներկայացուցիչներն են

նոր հայտատուները մի քանիսն են (10.1-ին կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ պետական տուրք՝

բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր:

նշվում են փոստային հասցեն,
հասցեն

հեռախոսահամարը

ֆաքսը

էլ. փոստի

7. Փոխակերպված հայտը սահմանափակվում է հետևյալ ապրանքների և (կամ) ծառայությունների համար

ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի
վրա

շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա

8. Ապրանքային նշանի հայտում նշված ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկից հանվում են

ցանկից հանված ապրանքները և (կամ) ծառայությունները նշվում են ըստ ԱԾՄԴ-ի դասերի շարունակությունը տրվում է լրացուցիչ թերթի վրա

9. Ապրանքային նշանի հայտի փոխակերպումն իրականացվում է՝

պայմանագրի, փոխանցման ակտի, այլ փաստաթղթի հիման վրա

(պայմանագիրը, փոխանցման ակտը, այլ փաստաթուղթը կամ դրա քաղվածքը կցվում են)

10. Ստորագրությունը _____

10.1. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

10.2. _____
(անունը, ազգանունը, պաշտոնը)

10.3. թվականը _____ 201_ թ.

10.4. Ստորագրողը՝ ապրանքային նշանի հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

նոր հայտատուն է նրա ներկայացուցիչն է (լիազորագիրը կցվում է)

ապրանքային նշանի նոր հայտատուներն են նրանց ներկայացուցիչներն են

ապրանքային նշանի հայտատուները քանիսն են (10.1-ին կետի տվյալները տրվում են լրացուցիչ թերթի վրա)

11. Վճարված է _____ պետական տուրք՝

բանկային սովորական փոխանցմամբ (անդորրագիրը կցվում է) էլեկտրոնային եղանակով

12. Հայտին կից ներկայացվում են _____ լրացուցիչ թերթեր: